ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրական դատարանը Սահմանադրության ընդունման 25-ամյակի առթիվ հայտարարում է պետական և հավաստագրված ոչ պետական բուհերի իրավաբանական ֆակուլտետների բակալավրիատի 3-րդ և 4-րդ կուրսերի ուսանողների, մագիստրանտների և ասպիրանտների գիտական աշխատանքների մրցույթ ըստ հետևյալ թեմաների՝

- «Մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխիքներն ու կառուցակարգերը»,
- «Սահմանադրական կարգը, ժողովրդաիշխանությունը, իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը»,
- «Սահմանադրական արդարադատության հիմունքները»:

Մրցույթը մեկնարկում է 2020 թվականի փետրվարի 6-ին՝ Սահմանադրական դատարանի կազմավորման օրը: Աշխատանքների ներկայացման վերջնաժամկետն է 2020 թվականի մայիսի 15-ը: Հոդվածները Սահմանադրական դատարան պետք է ներկայացվեն տպված և ստորագրված մեկ օրինակով՝ նշելով հեղինակի (հեղինակների) հասցեն և կոնտակտային տվյալները: Արդյունքները կամփոփվեն և կհրապարակվեն 2020 թվականի հուլիսի 5-ին՝ Սահմանադրության ընդունման 25-րդ տարեդարձի օրը:

Աշխատանքները պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին.

- ներկայացվեն հայերեն, մինչև 12 էջ ծավալով,
- պատրաստվեն A4 ձևաչափի թղթի վրա՝ միակողմանի տպված,
- տարածքը՝ վերևից - 2 սմ, ներքևից - 2 սմ, ձախից - 2 սմ, աջից - 2 սմ,
- տառատեսակը՝ GHEA Grapalat,
- տողերի միջև հեռավորությունը՝ 1.5 սմ,
- տառաչափը՝ 12,
- հոդվածը կարող է ներկայացվել մեկ կամ երկու անձի կողմից՝ համահեղինակությամբ,
- հոդվածի առաջին էջը պետք է ներառի հոդվածի վերնագիրը /ցանկալի է, որ վերնագրի առավելագույն երկարությունը չգերազանցի 10 բառը/, ամփոփումը՝ 5-10 նախադասություն, հոդվածի 5-10 հանգուցային բառեր և արտահայտություններ,
- սկզբում տրվում են հոդվածի հեղինակի (հեղինակների) անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը, կոչումը և գիտական աստիճանը,

Հեղինակի (հեղինակների) անունը, ազգանունը դրվում են թերթի մեջտեղում՝ հոդվածի վերնագրից առաջ, գլխատառ /հաստ/ Bold/, զբաղեցրած պաշտոնները, կոչումները և գիտական աստիճանները՝ փոքրատառ:

Յուրաքանչյուր խմբի (բակալավրներ, մագիստրանտներ, ասպիրանտներ) լավագույն աշխատանքների հեղինակներին կտրվեն պարգևավճարներ.

I տեղ՝ 75.000 դրամ - (3 աշխ.),
II տեղ՝ 50.000 դրամ - (3 աշխ.),
III տեղ՝ 25.000 դրամ - (3 աշխ.):

Յուրաքանչյուր խմբի լավագույն ճանաչված 5-ական աշխատանքները կհրապարակվեն Սահմանադրական դատարանի տեղեկագրում:

Լրացուցիչ տեղեկությունների և պարզաբանումների համար զանգահարել 011-588-140

Սահմանադրական դատարանի աշխատակազմ